

**ԴԱՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ
ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ
ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՄԻՐՁԱՆՑԱՆ Հ. Հ.

Ռուսական կառավարության հաստատած կանոնադրության համաձայն, 1837 թ. ռուսական կայսրության սահմաններում ստեղծվում են հայոց հոգևոր թեմեր՝ թեմական կամ վիճակային կոնսիստորիաներով (հոգևոր վարչություններ)¹: Ըստ այդ կանոնադրության, 1837 թ. օգոստոսի 6-ին հիմնադրվել է խոշորագույն թեմերից մեկը՝ Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիան, որը ենթակա էր Էջմիածնի սինդոդին:

Կոնսիստորիայի իրավասությունը տարածվում էր բուն Վրաստանի, Գանձակի, Ղազախի, Շամշադնի և Լոռու² հայոց եկեղեցիների ու ծխերի վրա: Այն մեծ դեր է խաղացել հայոց եկեղեցու և նրա իրավասության տակ գտնվող տարածքների բնակչության կյանքը (հատկապես կրոնական) կազմակերպելու մեջ:

Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիայի իրավասության շրջանակում ի թիվս շատ այլ խնդիրների (ինչպիսիք են եկեղեցական կալվածքների, շինությունների և գույքի կառավարումը կամ ֆինանսատնտեսական գործունեությունը, հոգևորականներին պաշտոնների նշանակելը և ազատելը, երեսփոխանների ընտրությունների կազմակերպումը, պսակադրության, ամուսնալուծության և թաղման հարցերով զբաղվելը, կտակների, հանգանակությունների և նվիրատվությունների հետևանքով գոյացած միջոցների տնօրինությունը, ռոճիկներ, նպաստներ, թոշակներ տալը, ծխական դպրոցների կառավարումը), քննարկվել են նաև դավանաբանական հարցեր: N 1990-ից մինչև 2133 գործերն ամբողջությամբ վերաբերում են կրոնափոխության խնդիրներին: Դրանք հիմնականում խնդրագրեր, գրություններ, դիմումներ են՝ հայ բնակիչներին բռնի կերպով կրոնափոխելու, նրանց (ինչպես անհատ անձանց, այնպես էլ ընտանիքների) ուղղափառ դավանանքի մկրտելու, ինչպես նաև ազ-

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 1, էջ 1:

² Լոռին իր շրջակայքով, Ղազախն ու Շամշադինը 1801 թվականից մտնում էին Քարթլի-Գախեթի թագավորության կազմի մեջ: Պահպանվել են Թելավի, Թիֆլիսի, Գորիի, Լոռու և այլ վայրերի հոգևոր վարչությունների հայտարարությունները, խնդրագրերը, բողոքները՝ անձնական, հողային, ծխական, դավանական և այլ հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կոնսիստորիայի օրագրությունները, նիստերի որոշումներն ու արձանագրությունները: Նստավայրը Թիֆլիսն էր, ուստի, փաստաթղթերի հիմնական մասը Հայաստանում չէ և դրանց միայն մի փոքր մասին ծանոթանալու հնարավորություն ունենք: Կոնսիստորիայի գործունեության վերաբերյալ ամենաարժանահավատ աղբյուրը Հայաստանի ազգային արխիվում գտնվող Վրացափմերեթական թեմի 53-րդ ֆոնդն է, որից էլ օգտվել ենք (այն Խորհրդային Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվին է հանձնել Վրացական ԽՍՀ-ի պետական կենտրոնական պատմական արխիվը):

գոյթամբ հայերի՝ հայ լուսավորչական դավանանքին վերադառնալու թույլտվություն ստանալու մասին: Վերջինները հիմնականում ռուս ուղղափառ, մահմեդական, վրացական, լյութերական և այլ դավանանքներից հայ լուսավորչական հավատին վերադառնալու խնդրագրեր են: Գերակշռում են ռուսական և վրացական ուղղափառ դավանանքներից հայկական եկեղեցու գիրկը դառնալու դիմում-խնդրանքները:

Վրացական եկեղեցին ամեն առիթ օգտագործում էր՝ հայերին հարկադրելու դավանափոխության, հատկապես շահարկվում էր ժողովրդի սոցիալական ծանր վիճակը, ինչից դրդված և գայթակղվելով վրացի հոգևորականների խոստումներից՝ շատ հայեր, անգամ ընտանիքներով, ընդունում էին վրացադավանություն: Իրենց նպատակները վրացիներն իրագործում էին հայ հոգևորականների միջոցով, որոնց ազդեցությունը ժողովրդի վրա ավելի ուժեղ էր:

Վրացացման դեմ բողոքների վերաբերյալ գործերը ամենասակավաթիվն են. դրա պատճառը տեղի վրացական հոգևոր կազմակերպությունների հարուցած խռնրդոտներն էին, վախի մթնոլորտը, ինչի հետևանքով բնակչությունը հազվադեպ է նման հարցերով դիմել հայ հոգևոր կազմակերպություններին: Իսկ կոնսիստորիան ցավոտ խնդրին անդրադարձել է միայն այն ժամանակ, երբ եղել է ահազանգ:

Բողոք-դիմումների առիթով կոնսիստորիայի գրասենյակում հարուցվել են գործեր, որոնք հիմնականում ունեն միօրինակ բովանդակություն. նշված են գործը բացելու և ավարտի տարեթիվը, ամիսն ու օրը, առաջին էջում ներկայացված է բողոքի տեքստը, ապա կցված են գործի վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ երբեմն վկաների ցուցմունքներով: Դրանց մի մասը պարզապես կրում է «Խնդրագրեր, գրություններ կրոնափոխության մասին» խորագիրը:

«Գործ՝ Մուխրանի բնակիչներին բռնի կերպով ուղղափառ դավանանքի մկրտելու մասին» փաստաթղթում կարդում ենք. «...խնդրոյ մէջօ զարիանի, վասն պաշտպանիլոց զնա ի բռնադատութիւն վրաց հոգևորականութեան»: Ապա հետևում է նույն Մելքոն Զարյանի և Մուխրանի հայազգի բնակիչներ Պետրոս Ապրեայանի, Հարություն Շահնազարյանի և Դավիթ Ճարոյանի համատեղ խնդրագիրը, որի մեջ նշվում է. «աղիրսիմք զՁեզ ազատիլ զմեզ և զկրօն միւր ի հարստահարութիւն վրաց...»³:

Խնդրագրի հիման վրա 1843 թ. մարտի 13-ին կազմվել է գործ՝ սինոդի անդամ արքեպիսկոպոս Բարսեղյանի կողմից. «Հրաման նորին կայսերական մեծութեան ինքնակալին ռուսաց ի լուսաւորչական հայոց սիւնհոդութիւնէ Էջմիածնի, վիճակային կոնսիստորիային Վրաստանի...յաղագս մկրտիլոց ի վրաց դաւանութի գորդիսն Մուխրանայ բնակիչ հայազգի Մելքոնի Զարիան, Պետրոսի Ապրիսիան, Յարութիւնի Շահնազարիան և Դավիթի Ճարոյեան.

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1991, էջ 2:

Հրամայիցին որովհետև ըստ նշանակիլոյ... յայտարարու ի կոնսիստորայիդ Վրաստանի արարիալ է արդէն ի կողմանէ... պարտուպատշաճն տնօրէնութեան ՚ի մասին զգիրդաստանս մուխրանիքցի Մելքոնի Զարովայ, Պիտրոսի Ապրէսիան, Յարութիւնի Շահնազարեանց և Դաւիթի Ճարօյիանց ի հայոց դաւանուի այնու յարգիլի պատճառաւ զի պսակն յիշիլ զայս բանի ընդ վրացի հեղինիաց»⁴:

N 1992 գործն ընդգրկում է Սղնախի գործակատար Պողոս ավագ քահանա Ստեփանոսյանի 1842 թ. հոկտեմբերի 14-ի հայտարարությունը Վրաստանի և Բմերեթի վիճակային աստյանին. «...արխիմանդրիդն ծմինդա ստիփան վանքի խիրսայու ահացուցանէ և ստիպէ, որպէսզի կարողացի տալ նրանց թողուլ զմիր ազգիայ հաւատս և փոխիլ ի վրաց դաւանուի», այնուհետև «ամինախոնարհաբար» խնդրում է «վիճակային Ատինից հոգալ... և գրիլ ուր հարկն է...», և թոյլ տալ պաշտիլ իւրեանց ընկալելալ հաւատն հայոց»⁵:

Նմանօրինակ իրավիճակ է նաև Թելավի գավառի գյուղերում: Կազմված է գործ՝ «Թելավի գավառի Ռուխպեր գյուղի հայ բնակիչների կրոնափոխության մասին», որում դեպքերն ընդգրկում են 1850 թ. փետրվարի 2-ից նոյեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածը:

Թելավի գործակատարը 1850 թ. փետրվարի 23-ին Վրաստանի և Բմերեթի վիճակային կոնսիստորիային ուղղված իր հայտարարության մեջ գրում է, որ փետրվարի 17-ին Ռուխպերի հայազգի Սիմոն Գալստյանը եկել է Թելավ և բողոքել, որ իրենց քահանա Տեր-Մարտիրոսյանը, իր հոգևոր պարտականությունները կատարելով, նախատել է հայազգի բնակչությանը և կոչ արել ընտանյոք հանդերձ ընդունել վրաց դավանանքը⁶:

Նույն գործակատարի՝ կոնսիստորիային արված մեկ այլ հայտարարությունից տեղեկանում ենք, որ վիճակային աստյանի հրամանագրով իրեն հանձնարարվել է քննել կրոնափոխության գործը⁷:

Վրացի հոգեորսների համար հատկապես հարմար թիրախ էին միայնակ կանայք և երեխաները, որոնց ավելի հեշտ էր դրդել դավանափոխության: Օրինակ՝ այրի Լալո Մդերատյանցը դավանափոխության բողոքներով դիմում է նորին բարձր սրբազնություն տեր Սիմոնին՝ «արքեպիսկոպոսին և կառավարչին հոգևոր գործոց հայոց Վրաստանի»⁸: Ամբողջ երկու տարի է ընդգրկում այրի Սոֆիա Թամազյանի և նրա գավակների կրոնափոխության գործը (1852 թ. ապրիլի 17-ից մինչև 1854 թ. հունիսի 3-ը): Այն պարունակում է Թելավի գործակատարի հայտարարությունը կոնսիստորիային՝ փշափերցի այրի Սոֆիա Թամազյանի և նրա գավակների կրոնափոխության մասին. «...լսելով այդ մասին, գնացի Փշավեր՝ խրատելու այրիին հաստատուն մնալ իր հավատի մեջ: ...սակայն վրացի անձինք... թույլ չտվին լսել զգուցումն կրոնափոխ կնոջ»: Գործակատարն իր հայտարարության մեջ ընդգծում է վրացի

⁴ Նույն տեղում, էջ 18:

⁵ Նույն տեղում, գ. 1992, էջ 4:

⁶ Նույն տեղում, գ. 1993, էջ 2:

⁷ Նույն տեղում, էջ 7:

⁸ Նույն տեղում, գ. 1990:

քահանայի գործողությունների անօրինականությունը. «...յայտնապես երևի, թե քահանայ վրաց չունէր իրաւունս գոնէ դարձուցանիլոյ զչափահաս մանկունս, յորոց առաջինն է 11 ամայ, երկրորդն 9 ամայ և երրորդն 3 ամայ, այս ողորմելի մանկտիկ ուստի՝ կարին գիտել թէ զին չ է կրօնափոխութիւն, և կամ քահանայ ո՞ր օրինօք մարթացաւ յորտորիլ զանմեղ մանկտին՝ և անիլ կրօնափոխիլոք քահանայն վրաց չեն միծ համարեալ ինքիանց յորտորիլն և խրատիլն»⁹:

Գործի առնչությամբ 1852 թ. օգոստոսի 15-ին Էջմիածնի սինոդի կողմից տրվել է «Հրաման նորին կայսերական մեծութեան ինքնակալին ամենայն բուսաց ի լուսավորչական հայոց սինոդից սրբոյ Էջմիածնի, վիճակային կոնսիստորիային հայոց Վրաստանի», որտեղ նշվում է, որ վրացի քահանա Իվանը¹⁰ ուղղափառ է դարձրել «այրի Սօփիին... կատարիլ է զկրկնակի մկրտութիւն, հակառակ եկեղիցական կանոնաց...»¹¹: Հակառակ կողմը փորձում է վկաների միջոցով ապացուցել, որ եկեղեցական կանոններին հակառակ ոչինչ չի արվել: «Կնիագ Իոսիֆ Բաբաշիձեն և Նիկոլայ Յիրիստովը ցուցիալ ին թէ քահանան ոչ այրի Թամագյանին, ոչ նրա որդիներին չի մկրտել, այլ կատարել է նրանց զսուրբ օծումն և հաղորդութեան սուրբ խորհուրդը»¹²:

Փաստորեն, վրացիներն ամեն կերպ ջանացել են խոչընդոտել աստանի գործունեությունը, թույլ չտալ, որ նրա գործակալները մեկնեն գյուղերն ու տեղում ծանոթանան խնդրի էությանը, անգամ դիմել են կեղծ վկաների ցուցմունքներին:

Գործ N 1995-ը վերնագրված է «Գրագրություններ դավանափոխության մասին» և ընդգրկում է 1884 թ. ապրիլի 16-ից 1887 թ. հուլիսի 11-ն ընկած ժամանակահատվածը: Գործից տեղեկանում ենք, որ Սդնախի հայոց գործակալ Ստեփանոս ավագ քահանան 1884 թ. ապրիլի 2-ին Վրաստանի և Բվերթի հայոց թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսին ուղղված իր հայտարարության մեջ ներկայացնում է շրջակա գյուղեր կատարած իր այցելությունները, որոնց նպատակն էր կանխել հայ բնակչության կողմից հավատուրացության դեպքերը: Նա հանդիպել է բազմաթիվ հայ մարդկանց հետ (անուն-ազգանունները թվարկում է՝ Ջաքարիա Բոբյանց և ուրիշներ), նրանց հետ բացատրական աշխատանքներ տարել, կոչ արել հաստատուն մնալ իրենց հավատի մեջ: Կրոնական գործակատարն առաջին հերթին այցելել է այն վայրերը, որտեղից բողոքներ էին ստացվել: Քահանան գրում է. «Ամենախոնարհաբար հայտնում եմ, թե փութացայ իսկոյն գնալ ի գիւղն Կակաբէթ,և այլոց Հայազգիաց գիւղն բազում մասամբք և բազում օրինակօք յորդորիալ՝ իմովսանն քարոզ կարդացի զօրն ողջոյն, զգանազան իղանակս

⁹ Նույն տեղում, գ. 1994, էջ 1:

¹⁰ Այլ էջերում նշվում է՝ Իվանե Շաքրիանեցի, Գասպարյանց (տե՛ս նույն տեղում, էջ 5-7):

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 7:

ցուցանիլով չթողուլ իրբեք գտնուր դաւանումին հօտի, և մտանիլ ՚ի ծոց Հունադաւանից, չլինիլ չար և վատ օրինակ լուսաւորչիսն ազգին, յիտ բազմատիմի հոգիաչափ խրատուց և յորտորանաց զամօթի հարիալ զլացան ՚ի սպաս զյանձնասնուն յունաստանութեան, որն խոստացան ինձ անսուտ խոստմամբ, մնալ միշտ յիտումն հայրական կոչման և օրինաց ...դարձիալ 31-ն ամսոյն և ամի կոչիալ... յորտորիցի, բիրիլով ընտ իս մինչ յիշարանն Կակարեթ գիղջ, խոսիլով ընդ նմա զնոյն առարկայէ ևս, խոստացաւ նոյնպէս կիալ հաստատ ՚ի լոյս հաւատ Հայոց Լուսաւորչիան իկիղիցւոյ»¹³:

Նույն Արիստակէս եպիսկոպոսին Սղնախի նահանգի քահանա տեր Բարսեղ Վարդանյանը 1884 թ. մարտի 24-ի իր հայտարարության մեջ նկարագրում է, թե ինչպես են հայերը «մկրտիլ ըստ ծեսի վրաց իկիղիցոյ», ապա խնդրում է՝ «եթէ կարելի է շուտով միջնորդել վրաց հոգիւոր յիշխանութեան դադարացնել գործը մինչև զքննումի»¹⁴: Ստեփանոս քահանան Արիստակէս եպիսկոպոսին 1884 թ. մայիսի 31-ին հայտնում է, որ տեր Բարսեղ քահանա Վարդանյանը ամսի 29-ի հայտարարությամբ իրեն տեղեկություն է տվել Չաքարիա Բորյանցի և այլոց կրոնափոխության մասին: Դրան հետևում է տեր Բարսեղի՝ Արիստակէս եպիսկոպոսին արված հայտարարությունը. «ինձ անձն արարեալ ժողովրդականաց Մանաւաքնակ Չաքարիայ Բորիանցը, 1884 ամի 24 մայիսի մկրտուից ըստ ծիսի վրաց իկեղիցոյ ձիռամբն սարտիսճալայ նահանգի վրաց գործակալ Թէվտարէ քահանայի Գուլիսաշվիլի մկրտումից առաջ հայերը ընդիմանալով այս արարողութեան մասին լսուից հայհոյանք մանաւաքնակ ծերեթէլից գէթէգով լուսաւորչի և հայոց կրօնի վիրայ իսկ Կակապիտու վրաց ուսուցիչ Չաքարէն Գուլիսաշվիլի բոլորովին անարքից հայոց կրօնը...»¹⁵:

Նույն գործի մեջ Սուրամի գործակալին տեղի քահանան¹⁶ գրում է. «Սովեցիսի հայորդիք իրկու տուն, Վաղայ քահանայի ժողովուրդը, իրանց չքաւորութիան պատճառով չեն ծառայում Հայոց հավատին»¹⁷:

Խնդրի առնչությամբ տիպական է 1998-րդ գործը, որը վերնագրված է «Գործ՝ Էստատե Զիրուխյանցի վրաց դավանանք ընդունելու մասին» և ընդգրկում է 1891 թ. մայիսի 22-ից հունիսի 12-ն ընկած ժամանակահատվածը: Այն տեղեկացնում է, որ Մուխրանի և շրջակա գյուղերի ծխատեր Պետրոս քահանա Վարչամյանը և Հովհաննէս քահանա Պեմուրյանը 1891 թ. մարտի 19-ին Դաղեթի հայոց վիճակի գործակալ Սարգիս քահանա Երիցյանին գրում են. «Պատիւ անձին համարիմք յայտնիլ Ձիրդ արժանապատուութեան հիտնիալ անախորժ դէպքս

Որպէս լուր միզ հասաւ իբր թէ միր ժողովուրդ Յալիսաքնակ Էստատե Զիրուխյանց ընդունիլ է ուղափառ դաւանութիւն յորդորմամբ և դրդմամբ տիւղոյն ուղափառ Ստիփան քահանայի Բիրիձէի: Որոյ ՚ի ստուգութեան այս

¹³ Նույն տեղում, գ. 1995, էջ 1:

¹⁴ Նույն տեղում, էջ 2:

¹⁵ Նույն տեղում, էջ 4:

¹⁶ Քահանայի անունն անընթեռնելի է:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1995, էջ 23:

անսպասիլի և ցաւալի լրոյ, մինք անձամբ անմիջապէս դիմեցինք յիշիալ գիւղն, խնդրիլով միգ ներկայանալ դաւանափոխ անձն, թէ ինչից դրդուած արիլ է այդ քայլը: Հնիրկայացաւ. միր բազում գնալն իգութ անցաւ, որովհետն նա կամ թագնվում էր, կամ տանը չէր լինում: Մինք ևս ստիպուած դիմեցինք բարիկամաց՝ գոնիա միգ յայտնին ճիշտ իղիլութիւնը. Եւ ահա նոքա կսկծանքով և աղիողորմ ձայնով պատմիցին Հստատէ Չիբուխյանցն գտնուիլով նիւթական նիղ դրութեան մեջ, այդ դրութիւնից օգուտ է քաղում տիղոյն ուղափառ քահանա Ստիփան Բիրիձէն շարունակ զանազան խորամանկ միջոցնիրով տքնում է խոստանալով տալ արծաթն ու մի քանի կոտի հաց, իբր թէ միայն նա կ'թողնէ իւր պապական հայ լուսավորչական դաւանութիւնը և կընդունէ ուղափառ դաւանութիւնը»: Դրան նպաստում է նաև Չիբուխյանի կինը, որը վաղուց հավատափոխ էր եղել: «Չիբուխյանը, ...շլացած ուղափառ քահանայի նիւթական օժանդակութիւնից, ընկճվում է, ընկնում է քահանայի լարած թակարդն»¹⁸: Քահանաները գործկալից խնդրում են դէպքի մասին տեղեկացնել, ուր հարկ է, և հետնել, որ հանգիստ թողնեն ժողովրդին:

Դրան հետնում է Դադէթի հայ գործակալ Սարգիս քահանա Երիցյանի հայտարարությունը՝ ուղղված Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիային՝ դարձյալ Չիբուխյանի դավանափոխության մասին. «...վրաց քահանային Ձալիսո, ապօրինի կարգաւ ինքնակամ նիրգործութեամբ և առանց կանխաւ գիտութեան և թոյլատուութեան հոգևոր իշխանութիւնաց իւր... ընդունիլ գդաւանութիւն իւրեանց հակառակ օրինաց»¹⁹:

Գործի ամենավերջին՝ 6-րդ էջում կա վկաների անուններով արձանագրություն՝ մոտ մեկ էջ՝ գրված Դադէթի գործակալի կողմից, 1891 թ. հունիսի 20-ին: Արձանագրության մեջ համառոտ պատմւում է եղելությունը և մեղադրանք է ներկայացվում վրաց քահանայի դեմ:

Գործի հայկական հոգևոր վարչությանը 1900 թ. մարտի 10-ին հայտնի է դառնում, որ Կավթիս գյուղի երկու եղբայր՝ Ծղալոբ և Գևորգ Աբուլյանցներն իրենց ընտանիքներով դավանափոխ են եղել: Բացի այդ, այլ հայ ընտանիքներ ևս մտադիր են հետնել նրանց օրինակին: Պատճառն իբր «վաշխառութեամբ զբաղվող մի քահանա է», որի ձեռքի տակ ճնշվում էր 150 ընտանիքից բաղկացած տեղի ամբողջ հայ համայնքը: Այդ քահանան, իբրն ժամանակավոր հովիվ, եկել էր Ծալկայից և նրա դեմ ժողովուրդը բազմաթիվ զանգատներ էր ներկայացրել հոգևոր իշխանությանը, բայց ոչ մի արդյունքի չէր հասել: Կոնսիստորիան պատվիրում է կառավարությանը «...ստուգել ճշտել և հանգամանորեն հայտնել աստանին թե որքա՞ն ստույգ է դա»²⁰, իսկ դէպքի առնչությամբ կոնսիստորիայի գրասենյակում կազմվում է գործ՝ «Կավթիս գյուղի բակիչներ Ծղալոբ և Գևորգ Աբուլյանցների կրոնափոխության մասին».

¹⁸ Նույն տեղում, գ. 1998, էջ 2:

¹⁹ Նույն տեղում, էջ 5:

²⁰ Նույն տեղում, գ. 2007, էջ 1:

«Վրաստանի և Իմերեթի հայ թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսին ի փոխանորդե Հայոց Գորոյ և Իմերեթի յայտարարութիւն ստոյգ տեղեկութեամբ իմացանք որ կալթիսաբնակ Աղիքսանդր Աբուլյանցն ընտանիքով ընդունել է հունադավանութիւն և մկրտվել տեղի վրացի քահանայի և գործակալի ձեռքով: Բացի այդ 7 ընտանիք համաձայնություն են տվել վրացի քահանային դաւանափոխութեան համար: Ինչպես ստուգեցի, դավանափոխութեան առիթ է հանդիսացել ծխատեր Գրիգոր քահանա Մանուկեանը, որի վատթար կենցաղը և վարքը հայտնի են:

1900 թ. մարտ, Գորի»²¹:

Երբեմն էլ ծնված հայ երեխաները վրաց դավանանքի են մկրտվել մեքենայաբար: Սակայն պատեհ առիթի դեպքում հայերը փորձել են վերադառնալ հայկական դավանանքի: Թերեզա Նիկողոսյան-Գրիգորյանը կոնսիստորիային իր խնդրագրի մեջ գրում է. «...որովհետև Տօխմիաուրի գյուղի (Տփլիսի գավառ - Ա. Հ.) բնակիչները բոլորն էլ վրացի են, ստիպված դիմեցի տեղի ծխատեր վրացի քահանային, որը և մկրտեց դստերս անվանելով Եվգենիա: Քանի որ ես լուսավորչական եմ, խնդրում եմ աստյանից տնօրինել, որ դուստրս էլ լինի հայ լուսավորչական»²²:

Վրացադավանության տարածման ճանապարհին թերևս ամենանպաստավոր պայմանը եկեղեցիներում աղոթքների ու ծիսակատարությունների կատարման ժամանակ վրացերենը ներմուծելն էր, ինչի փորձեր բազմիցս կատարվում էին: «Քութախի եկեղեցական գործակալի հայտարարությունը եկեղեցում աղոթքը վրացերեն լեզվով անցկացնելու մասին» գործն սկսվում է Քութախի գործակալի հայտարարությամբ՝ ուղղված Տփլիսի հայոց վիճակային կոնսիստորիային: Այնտեղ ասվում է, որ Բարսեղ Կեսարացին, որը միշտ իր եկեղեցական հաղորդումը հայերեն է սկսել, ավագ հինգշաբթի օրը հայերեն ճաշոց մատյանը վարել է «բանաւոր թարգմանութի վրաց բարբառ...»²³: Գործի հետաքննության ընթացքում բերված արդարացումը հիմնականում մեկն է՝ վրաց լեզուն հասկանալի է ժողովրդին:

Վերը նշված գործերով վրացադավանության դեմ բողոքների վերաբերյալ կազմված գործերը սահմանափակվում են, սակայն անգամ եղածներից դժվար չէ կռահել, որ վրացացման դեպքերն ու փորձերը համընդհանուր բնույթ են կրել: Այդ մասին են վկայում բնակիչների խնդրագրերը՝ ուղղափառ դավանանքից հայ լուսավորչական կրոնին վերադառնալու վերաբերյալ, որոնք, ինչպես վերը նշեցինք, քանակով ամենաշատն են: Օրինակ՝ Մարիամ Գևորգի Ավգարոզովի, Եվա Լևոնի Միրզոնի, Զինաիդա Մերգեննա Տեր-Պողոսյանի, Եկատերինա Դավիթովնա Գվանդաձեի, Ալեքսանդրա Անդրեննա Խարազյանցի, Վարվառա Գևորգովնա Արծրունու, Նինա Արշակովնա Գիլանովնայի, Օհան Նիկողայոսի Սահակյանցի, Դավիթ Գրիգորի

²¹ Նույն տեղում, էջ 2:

²² Նույն տեղում, գ. 2097:

²³ Նույն տեղում, գ. 112, էջ 1-2:

Տունիաշվիլու և շատ-շատերի դիմումները՝ ուղղափառությունից հայ լուսավորչական կրոնին վերադառնալու խնդրանքով²⁴:

Դիմումներն ուղղվում էին Թիֆլիսի նահանգապետին, ապա ներքին գործերի նախարարությունը Վրաստանի և Իմերեթի Հայ լուսավորչական կոնսիստորիային հանձնարարում էր նայել գործը: Այնուհետև տվյալ գավառի կամ քաղաքի տեղի Հայոց վիճակային կոնսիստորիային գրություն էր ուղարկվում՝ նահանգական կառավարության համապատասխան թվի մակագրությամբ: Ամենավերջում գործը քննում էր Տիֆլիսի բ. մասի գործակալը, որն էլ հավանություն տալով՝ առաջարկում էր անհապաղ ընդառաջել խնդրատուին, վերջինիս կողմից ընտրված քահանայի միջոցով իրագործել դավանափոխությունը և տեղեկացնել իրեն այդ մասին: Պետք է նշել, որ բոլոր դիմումներն ընթացք են ստացել, ինչի մասին համապատասխան գրություններն առկա են: Հատկանշական է, որ լուսավորչական դավանանքին վերադառնալու դիմումների հեղինակները հիմնականում կանայք են, քանի որ եկեղեցին թույլատրում էր հայ լուսավորչական հավատի մարդու հետ ամուսնանալու դեպքում ընդունել ամուսնու դավանանքը: Դիմող կանայք այդպես էլ նշում են իրենց դիմումի մեջ՝ պատճառաբանելով իրենց քայլը:

Այսպիսով, Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիան, չնայած գործունեության թերի կողմերին, հսկայական դեր է կատարել իր թեմի հայ բնակչության հոգևոր կյանքում: Կոնսիստորիայի գոյությամբ ժողովրդի սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքը բավական կանոնակարգվել է, կանխվել կամ բացահայտվել են բազմաթիվ զեղծարարություններ, այն զսպաշապկի դեր է կատարել վրացի և հայ կանոնագանց հոգևորականների գործունեության ճանապարհին, վերջիններիս ստիպել հաշվի նստել թեմի որոշումների հետ:

Դավանափոխ բնակչության գլխին մշտապես կախված էր ուժացման վտանգը: Պատահական չէ, որ շատ բնակավայրերի հայեր, որոնք ուղղափառ կամ կաթոլիկ դավանանք էին ընդունել, հետագայում վրացացան: Կոնսիստորիան, հայ բնակիչներին ենթարկելով հայ հոգևոր կազմակերպություններին, նրանց հնարավորություն տալով պահպանել իրենց հայ լուսավորչական հավատը, նպաստել է նրանց հայ մնալու ազգանվեր գործին: Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիայի թղթաբանական գործունեության ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ թեմի իրավասության տակ գտնվող տարածքներն ունեին պատկառելի թվով հայ բնակչություն: Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ չնայած նստավայրը Թիֆլիսն էր, կոնսիստորիայի գրագրությունները տարվել են գուտ հայերենով (բացառությամբ մի քանի վրացերեն և ռուսերեն փաստաթղթերի, որոնց համարժեք հայերեն թարգմանություններն առկա են): Ուշագրավ է Ներսես կաթողիկոսի 1850 թ. կոնդակը՝ ուղղված վիրահայոց բոլոր քահանաներին՝

²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 2025, 2053, 2064, 2071, 2075, 2094, 2098, 2114, 2125:

Դավանափոխության հարցերը Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային... 167
հայերենը պարտադիր սովորելու համար իրենց որդիներին Սանահինի
*վանքը ուղարկելու մասին*²⁵:

Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիան լուծարվել է
1922 թ.:

**ВОПРОСЫ ВЕРООТСТУПНИЧЕСТВА В ПРОТОКОЛАХ
СУДЕБНОЙ ИНСТАНЦИИ АРМЯНСКОЙ ТЕРРИТОРИАЛЬНОЙ КОНСИСТОРИИ ГРУЗИИ
И ИМЕРЕТИ**

АМИРДЖАНИЯ А. О.

Резюме

В 1837 г. на территории Российской империи создаются армянские духовные епархии с органами духовного управления – консисториями. 6-го августа 1837 г. была основана одна из крупнейших епархий – территориальная армянская Консistorия Грузии и Имерети, которая была подотчетна Эчмиадзинскому синоду.

В компетенцию консистории входила деятельность армянских церквей и приходов Грузии, Гандзака, Казаха, Шамшадина и Лори. В рамках компетенции консистории в числе иных вопросов рассматривались также вопросы богословия. Архивные дела N 1990 – N 2133 касаются проблем вероотступничества, представляя собой жалобы, заявления по поводу принуждения армянских жителей отступить от своей веры и принудительного обращения их в православную веру.

Грузинская церковь использовала любую возможность для принудительного вероотступничества, пользуясь тяжелым социальным положением народа и обещая им безбедное существование. С этой целью грузины использовали армянских духовников, всячески препятствуя деятельности консистории, не разрешая ее управляющим уезжать в села и на местах знакомиться с жалобами. Армянская территориальная консистория Грузии и Имерети была ликвидирована в 1922 г.

²⁵ Նույն տեղում, գ. 93:

**APOSTASY ISSUES IN THE PROCEEDINGS
OF ARMENIAN CONSISTORY OF GEORGIA AND IMERETI**

H. AMIRJANIAN

Abstract

On August 6, 1837, near the boundary of Russian empire appeared one of the largest Armenian dioceses – the consistory of Georgia and Imereti. It was under the control of Etchmiadzin synod. The diocese separated its rights over the churches in Georgia, Gandzak, Ghazakh, and Lori.

Besides other issues, the diocese also addressed theological issues. Archived materials numbered between 1990 and 2133 address the apostasy issues, statements that forced the Armenians to apostatise.

The Georgian church used any opportunity to impose apostasy on Armenians taking advantage of their hard social conditions and promising them a prosperous life. The Georgians also had the support of the priests, who had much influence on people.

The Armenian territorial consistory of Georgia and Imereti was segregated in 1922.